Երևանի պետական համալսարանում գործող
Բարձրագույն կրթության և գիտության կոմիտեի (ԲԿԳԿ)
իրավագիտության 001 մասնագիտական խորհրդին
հասցե՝ ՀՀ 0025, Երևան, Ալեք Մանուկյան փողոց, թիվ 1

ԿԱՐԾԻՔ
ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԸՆԴԴԻՄԱԽՈՍԻ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ ՎԱՀՐԱՄ ԱՎԵՏԻՍՅԱՆԻ

ԺԲ.00.03- Մասնավոր իրավունք (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք) մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան հայցելու համար ներկայացված Եվա Գագիկի Սաղոյանի «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» թեմայով ատենախոսության և սեղմագրի վերաբերյալ

Ատենախոսական աշխատանքը նվիրված է զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրային հարաբերությունների Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ կարգավորման խնդրի ուսումնասիրությանը:

Կատարված հետազոտության արդիականությունը պայմանավորված է վերջին տարիներին ոլորտում իրականացված հայեցակարգային օրենսդրական փոփոխություններով, որոնք առաջ են բերել այս հարաբերությունները պայմանագրի ինքնուրույն տեսակի միջոցով կարգավորման անհրաժեշտությանը, այդ պայմանագրի իրավական բնույթի և բովանդակության, կողմերի իրավական կարգավիճակի, ինչպես նաև զբոսաշրջային ծառայություններից օգտվող սպառողների շահերի պաշտպանության կառուցակարգերի վերահմաստավորման անհրաժեշտությանը: Ուսումնասիրելով «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ նախկին օրենքի գործողության ընթացքում ձևավորված իրավակիրառ և դատական պրակտիկան՝ հեղինակը կատարել է զբոսաշրջային ծառայությունների մատուցման ոլորտում առկա ինչպես օրենսդրական, այնպես էլ գործնական խնդիրների խորքային վերլուծություն: Հետազոտության արդյունքում բացահայտվել են գործող կարգավորումների մի շարք թերություններ և բացեր, որոնց հաղթահարման նպատակով ատենախոսությունում ներկայացվել են գիտականորեն հիմնավորված եզրահանգումներ և առաջարկություններ՝ ուղղված 2023 թվականին ընդունված «Զբոսաշրջության մասին» ՀՀ նոր օրենքով ամրագրված կարգավորումների կատարելագործմանը և իրավական կառուցակարգերի արդյունավետության բարձրացմանը: Այս համատեքստում հեղինակի կողմից իրականացված ուսումնասիրությունը ոչ միայն լրացնում է հայրենական իրավագիտության մեջ առկա գիտական բացը, այլև ունի կարևոր տեսագործնական արժեք:

Հեղինակն իր մոտեցումներն ու առաջարկություններն առաջ քաշելիս հիմնվել է

ներպետական օրենսդրության և «Փաթեթային ճանապարհորդությունների և առնչվող ճանապարհորդական համաձայնությունների մասին» ԵՄ դիրեկտիվի իրավահամեմատական վերլուծության վրա: Նման մեթոդաբանական մոտեցումն ընդգծում է աշխատանքի արժանիքը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետությունը ստանձնել է իր ազգային օրենսդրությունը եվրոպական չափանիշներին, այդ թվում՝ նշված դիրեկտիվին մոտարկելու միջազգային հանձնառություն:

Հեղինակը կատարել է նաև զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորման համապարփակ, խորը և համալիր գիտագործնական վերլուծություն: Ուսումնասիրվել է անհրաժեշտ քանակությամբ տեսական գրականություն, տարբեր երկրների օրենսդրական ակտեր, վերաբերելի միջազգային-իրավական փաստաթղթեր, ինչպես հայրենական, այնպես էլ միջազգային դատական պրակտիկան:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլուխներից, տասը պարագրաֆներից, եզրակացությունից, ինչպես նաև օգտագործված գրականության ցանկից:

Հեղինակը քննարկել է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված զբոսաշրջիկության ծառայության մատուցման պայմանագրի և «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով նախատեսված զբոսաշրջային փաթեթի պայմանագրի հարաբերակցության հարցը, զբոսաշրջային փաթեթի՝ որպես քաղաքացիական իրավունքների օբյեկտի էությունը, դրանում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների նկատմամբ սպառողի պահանջի իրավունքի ծագման հիմքերը, զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից մատուցվող ծառայության բովանդակությունը:

Արդյունքում աշխատանքի 34-35-րդ էջերում հեղինակը եկել է այն եզրահանգման, որ զբոսաշրջային փաթեթը՝ որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ, ծառայությունների ամբողջություն է, ուստի դրա իրային բնույթի վերաբերյալ դատողությունները, ինչպես նաև նշված օբյեկտի հատուցելի փոխանցման գործարքի նկատմամբ «իրացում» կամ «վաճառք» օրենսդրական եզրույթների կիրառումն արդարացված չէ: Բացի այդ, հիմնավորվել է, որ կողմերի պայմանագրային հարաբերությունների օբյեկտը զբոսաշրջային փաթեթներից բացի կարող է ընդգրկել նաև տուրեր և առանձին զբոսաշրջային ծառայություններ, որպիսի հանգամանքը զբոսաշրջային փաթեթի պայմանագրի իրավական բնորոշումը սահմանելիս անտեսվել է օրենսդրի կողմից (էջ 21): Ըստ այդմ՝ հեղինակն առաջարկել է «Զբոսաշրջության մասին» ՀՀ օրենքով սահմանված «զբոսաշրջային փաթեթի պայմանագիր» եզրույթը փոխարինել «զբոսաշրջային պայմանագիր» եզրույթով՝ առաջարկելով նաև այդ պայմանագրի նոր հասկացություն, որը համահունչ է սպառողին մատուցվող ծառայությունների ցանկացած շրջանակի:

Հեղինակն անդրադարձել է զբոսաշրջային պայմանագրի կողմերի իրավական կարգավիճակի հետ կապված վիճելի հարցերին, մասնավորապես՝ այս պայմանագրի շրջանակներում «պատվիրատու», «զբոսաշրջիկ» և «սպառող» կատեգորիաների հարաբերակցությանը՝ աշխատանքի 51-րդ էջում առաջարկելով զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կոնտրագենտի վերաբերյալ օրենսդրական հստակեցում:

Քննարկելով զբոսաշրջային գործունեության սուբյեկտին ներկայացվող օրենսդրական պահանջները՝ մանրամասն անդրադարձ է կատարվել վերջիններիս կողմից ներկայացման ենթակա երաշխիքի մեխանիզմի առնչությամբ առկա օրենսդրական թերություններին ու բացերին: Այդ առթիվ հեղինակի գիտագործնական մոտեցումներն ամփոփվել են աշխատանքի 64-65-րդ էջերում ներկայացված առաջարկում, որն ուղղված է ֆինանսական կամ ապահովագրական երաշխիքով զբոսաշրջային փաթեթի արժեքի և սպառողի

ռեպատրիացիայի ծախսերի հատուցում պահանջելու կոնկրետ հիմքեր սահմանելուն: Միաժամանակ առաջարկվել է ներդնել զբոսաշրջային գործունեության սուբյեկտների ամենամյա հատկացումների հաշվին ձևավորված երաշխիքային ֆոնդի միջոցներով հատուցման կառուցակարգ՝ սահմանելով նաև ֆոնդի միջոցներով հատուցում տրամադրելու դեպքերը (72-73-րդ էջեր):

Այնուհետև հեղինակը քննարկման առարկա է դարձրել զբոսաշրջային պայմանագրի էական պայմանների շրջանակը՝ վերլուծելով ոլորտային օրենքով նախատեսված պայմանագրի պարտադիր դրույթները: Արդյունքում առաջարկվել է օրենքով սահմանված պարտադիր պայմանների երկաստիճան դասակարգում և նախատեսվել է պայմանագրի կնքվածության տեսանկյունից այդ երկու խմբերից յուրաքանչյուրում ընդգրկված պայմանների բացակայության իրավական հետևանքը (92-94-րդ էջեր):

Աշխատանքի 3-րդ գլխում հետազոտվել են խնդրո առարկա պայմանագրի փոփոխման և լուծման ընթացակարգի առանձնահատկությունները՝ առաջարկելով փոփոխման և լուծման հատուկ կարգ, լուծման հիմքերի շրջանակ և պայմանագրի լուծման դեպքերում կողմերի միջև ծախսերի բաշխման մեխանիզմ:

Հեղինակի կողմից համալիր քննարկման են ենթարկվել զբոսաշրջային փաթեթում ընդգրկված զբոսաշրջային ծառայությունների համար պատասխանատվության սուբյեկտի՝ աշխարհում գոյություն ունեցող մոդելները, հիմնավորվել է այդ ծառայությունների համար զբոսաշրջային գործունեության սուբյեկտի պատասխանատվությունը նախատեսելու անհրաժեշտությունը: Միաժամանակ օդային փոխադրումների օրինակով փոխադրման պարտավորության առանձնահատկությունների ուսումնասիրության արդյունքում հիմնավորվել է այդ ծառայության համար փոխադրողի պատասխանատվությունը նախատեսելու նպատակահարմարությունը:

Զբոսաշրջային օպերատորի և գործակալի գործունեության բովանդակության և նպատակների ուսումնասիրության համատեքստում հեղինակն առաջարկել է սահմանել պարտավորության խախտման համար վերջիններիս համապարտ պատասխանատվությունը: Ընդ որում, նույն կանոնն առաջարկվել է ամրագրել նաև օտարերկրյա զբոսաշրջային օպերատորի և տեղական զբոսաշրջային գործակալի համագործակցության դեպքում, բացառությամբ այն դեպքի, երբ վերջիններս միջազգային մասնավոր իրավունքի կանոններով ընտրել են կիրառելի այլ իրավունք:

Աշխատանքում անդադարձ է կատարվել նաև զբոսաշրջային գործունեության սուբյեկտներին պատասխանատվությունից ազատելու հիմքերին՝ առաջարկելով վերջիններիս պատասխանատվությունը բացառող հատուկ պայմաններ:

Աշխատանքի արժանիքներից է ոչ միայն դրա հագեցվածությունը օրենսդրական փոփոխությունների առաջարկներով, այլև մի շարք նորամուծությունները, որոնք նախկինում չեն դարձել գիտական մակարդակում քննարկման առարկա, օրինակ՝ արտագնա զբոսաշրջային գործունեության սուբյեկտների գործունեության նախապայման հանդիսացող՝ երաշխիքով ապահովման ենթակա գույքային շահերի շրջանակը, հատուցման հիմքերի դասակարգումն ըստ օբյեկտիվ և սուբյեկտիվ չափանիշների (71-72-րդ էջեր), զբոսաշրջային պայմանագրի լուծման հիմք հանդիսացող՝ կողմերից յուրաքանչյուր կողմից պայմանագրի էական խախտումների և հանգամանքների էական փոփոխությունների դրսևորումների շրջանակը (110-112-րդ էջեր), տեղական զբոսաշրջային գործակալների կողմից օտարերկրյա զբոսաշրջային օպերատորների ձևավորած զբոսաշրջային փաթեթների շրջանակներում այդ սուբյեկտների համապարտ պատասխանատվության կանոնը (էջ 160) և այլն:

Ամփոփելով՝ հարկ է նշել, որ հեղինակը կատարել է կարևոր գիտապրակտիկ նշանակություն ունեցող եզրահանգումներ, մշակել է տեսական հասկացություններ և ներկայացրել օրենսդրական բարեփոխումների արժեքավոր առաջարկներ:

Աշխատանքի հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված թվով 7 գիտական հոդվածներում, ինչպես նաև սեղմագրում:

Ատենախոսության և սեղմագրի ծավալն ու ձևավորումը համապատասխանում են ԲԿԳԿ-ի կողմից սահմանված կանոններին:

Միևնույն ժամանակ, ինչպես ցանկացած աշխատանք, այնպես էլ ուսումնասիրված ատենախոսությունը, զերծ չէ վիճելի դրույթներից և որոշ թերություններից, որոնք կայանում են հետևյալում.

1. Պաշտպանության ներկայացվող 2-րդ դրույթում հեղինակը նշում է, որ արտազնա զբոսաշրջային գործունեության սուբյեկտների կողմից պարտավորությունների ցանկացած խախտման դեպքում ֆինանսական երաշխիքով հատուցում տրամադրելու՝ գործող օրենսդրությամբ նախատեսված պահանջն արդարացված չէ և չի բխում միջազգային պրակտիկայից: Այս համատեքստում ֆինանսական ապահովման մեխանիզմը կոնկրետ ռիսկերի, մասնավորապես՝ անվճարունակության և որոշ բացառիկ դեպքերում չվերադարձվող վճարների ապահովման հետ կապելու՝ հեղինակի առաջարկը զբոսաշրջային գործունեության սուբյեկտների ֆինանսական բեռը հավասարակշռելու առումով կարող է արդարացված համարվել:

Միևնույն ժամանակ, որոշակի հարցեր է առաջացնում այն պնդումը, որ պարտադիր ֆինանսական ապահովման մեխանիզմի կիրառության շրջանակը պետք է սահմանափակվի բացառապես նշված երկու դեպքերով: Թեև միջազգային պրակտիկայում ֆինանսական ապահովման միջոցների հիմնական նպատակը, որպես կանոն, սպառողներին զբոսաշրջային գործունեության սուբյեկտների անվճարունակության ռիսկից պաշտպանելն է, այնուամենայնիվ, կարծում ենք՝ սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից բավականաչափ հիմնավորված չէ պարտադիր ֆինանսական ապահովման մեխանիզմի կիրառման հնարավորությունը բացառելն այն դեպքում, երբ պարտավորության խախտումը պայմանավորված է ոչ թե զբոսաշրջային գործունեության սուբյեկտների անվճարունակությամբ կամ անհաղթահարելի ուժով, այլ ծառայության մատուցման էական թերություններով կամ այլ պատճառներով, որոնց հետևանքով սպառողը փաստացի հայտնվում է նույն անբարենպաստ իրավիճակում:

2. Աշխատանքի 110-111-րդ էջերում հեղինակը թվարկում է ինչպես զբոսաշրջային գործունեության սուբյեկտի, այնպես էլ պատվիրատուի (սպառողի) կողմից պայմանագրի էական խախտումները, որոնց դեպքում շահագրգիռ կողմը պետք է հնարավորություն ունենա միակողմանի առանց դատարան դիմելու լուծելու պայմանագիրը:

Միևնույն ժամանակ, արտադատական կարգով զբոսաշրջային պայմանագիրը լուծելու իրավունքն անխոչընդոտ իրացնելու նպատակով հեղինակն առաջարկում է օրենսդրորեն ամրագրել պայմանագրի լուծման իրավական հետևանքը: Մասնավորապես՝ առաջարկվում է սահմանել, որ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից պայմանագրի էական խախտում թույլ տալու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու դեպքում զբոսաշրջային գործունեության սուբյեկտը պարտավոր է վերադարձնել ծառայության արժեքը, իսկ պատվիրատուն (սպառողը) պետք է ազատվի վաղաժամկետ լուծման վճար վճարելու պարտականությունից:

Ինչպես կարելի է նկատել, հեղինակի կողմից առաջարկվող իրավական հետևանքը

վերաբերում է միայն զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կողմից էական խախտման դեպքում պայմանագրի լուծմանը: Մինչդեռ, հաշվի առնելով, որ նույն տրամաբանությամբ նախատեսվում է նաև պատվիրատուի (սպառողի) կողմից էական խախտման թույլ տալու հիմքով պայմանագիրը միակողմանի լուծելու հնարավորություն, կարծում ենք՝ նպատակահարմար կլիներ նաև պայմանագիրն այդ հիմքով լուծելու իրավական հետևանքի օրենսդրական հստակեցումը:

3. Պաշտպանության ներկայացվող 6-րդ դրույթում հեղինակը եզրակացնում է, որ անգամ այն դեպքում, երբ զբոսաշրջային գործակալը սպառողների հետ հարաբերություններում հանդես է գալիս ոչ թե իր, այլ զբոսաշրջային օպերատորի անունից, այսինքն՝ առերևույթ բացակայում է ձեռնարկատիրական գործունեության հատկանիշներից մեկը, միևնույն է, վերջինս ծառայության մատուցման պարտավորության ինքնուրույն սուբյեկտ է՝ օժտված ինչպես միջնորդային, այնպես էլ զբոսաշրջային գործունեության սուբյեկտի կարգավիճակից բխող պարտականությունների շրջանակով: Ուստի հեղինակն առաջարկում է նախատեսել զբոսաշրջային ծատայությունների մատուցման պարտավորությունը խախտելու համար զբոսաշրջային օպերատորի և գործակալի համապարտ պատասխանատվություն:

Կարծում ենք՝ զբոսաշրջային օպերատորի անունից հանդես եկող զբոսաշրջային գործակալին պարտավորության ինքնուրույն և զբոսաշրջային օպերատորին հավասարազոր սուբյեկտ դիտարկելը բավականաչափ հիմնավորված չէ: Մասնավորապես՝ թե՛ հանձնարարության, թե՛ պրինցիպալի անունից և նրա հաշվին կնքված գործակալության պայմանագրերի շրջանակներում համապատասխանաբար՝ հանձնակատարի և գործակալի կնքված գործարքներով իրավունքներ և պարտականություններ է ձեռք բերում ամիջականորեն հանձնարարողը և պրինցիպալը: Այսինքն՝ նշված դեպքում գործակալի տնտեսական գործունեության արդյունքն անցնում է զբոսաշրջային օպերատորին: Ուստի միայն այն հանգամանքը, որ գործակալն ունի տեղեկատվական, խորհրդատվական կամ կազմակերպչական որոշակի պարտականություններ, մեր կարծիքով, բավարար չէ նրան զբոսաշրջային օպերատորի հետ հավասար հիմունքներով պատասխանատվության ենթարկելու համար: Հատկանշական է, որ հեղինակն ինքը աշխատանքի 155-րդ էջում ընդգծում է, որ այս պարտավորությունում զբոսաշրջային օպերատորը և գործակալը՝ որպես պարտապաններ, իրենց կարգավիճակով հավասար չեն, քանի որ վերջիններիս գործունեության բովանդակությունը, համապատասխանաբար՝ պարտականությունների շրջանակը չեն նույնանում:

Այս ամենով հանդերձ, պետք է նշել, որ ներկայացված նկատառումները չեն արժեզրկում, ընդհանուր առմամբ, հաջողված ատենախոսությունը և պայմանավորված են աշխատանքն առավել կատարյալ տեսնելու ցանկությամբ:

Եվա Սաղոյանի ատենախոսությունը բնութագրվում է ներքին ամբողջականությամբ, հանդիսանում է արդիական, տեսական և գործնական առումով՝ արժեքավոր: Այն շարադրված է գրագետ հայերենով, աչքի է ընկնում ինքնուրույն ձևակերպումների և սեփական դատողությունների առատությամբ:

Վերը շարադրվածը հիմք է տալիս եզրակացնելու, որ Եվա Գագիկի Սաղոյանի «Զբոսաշրջային ծառայությունների մատուցման պայմանագրի իրավական կարգավորումը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է համակարգային, համալիր և ավարտուն հետազոտություն:

Ընդդիմախոսության ներկայացված ատենախոսությունը համապատասխանում է

ԺԲ.00.03 «Մասնավոր իրավունք» մասնագիտությանը (քաղաքացիական, առևտրային (կոմերցիոն), միջազգային մասնավոր, ընտանեկան, աշխատանքային, սոցիալական ապահովության իրավունք), բավարարում է ՀՀ կառավարության 1997 թվականի օգոստոսի 8-ի թիվ 327 որոշմամբ հաստատված «ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի» 7-րդ կետի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է «Իրավաբանական գիտությունների թեկնածու» գիտական աստիճանի շնորհման:

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԴՈԿՏՈՐ, ՊՐՈՖԵՍՈՐ՝ Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

05.06.2026թ.

«Վ. Ավետիսյանի ստորագրության իսկությունը հաստատում եմ»՝

ԵՊՀ ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ՏԵՂԱԿԱԼ՝

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ